

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻՖՆ ԱԼ-
ՋԱՌԻՋԻԻ «ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Շուշան Կյուրեղյան

shoushan.kyureghyan@ysu.am

Քանայի բառեր՝ մուսուլմանական ումմա, Սուննա, նորարարություն, Իբն ալ-Ջաուզի, «Թալբիս Իբլիս», հանքայինականություն

Մուհամադ մարգարեի մահից հետո իսլամի սրբնթաց տարածման, մուսուլմանական համայնքի աստիճանական ընդլայնման և կյանքի պայմանների փոփոխության արդյունքում համայնքի անդամների մոտ առաջանում էին հարցեր, որոնց պատասխանները չկային Ղուրանում: Այս հարցերին պատասխան տալու նպատակով արդեն 7-րդ դարի երկրորդ կեսին սկսվեց Մուհամադ մարգարեի արարքները, խոսքերը և լուռ համաձայնությունն ամփոփող պատումների՝ հադիսների հավաքագրման գործընթացը: Այս պատումներն ամփոփող Սուննան ¹ դարձավ իսլամի երկրորդ սկզբնաղբյուրը, որի դրույթների և Մարգարեի կյանքի նախադեպերի հիման վրա լուծում էր առաջարկվում համայնքում ձևակերպվող խնդիրներին:

Սուննային հակադրվում էր նորարարությունը (bid'a), որն ամփոփում էր արագ փոփոխվող իրականության պայմաններում

¹ Սուննան (թարգմ.՝ միջոց, ճանապարհ, օրինակ, սովորույթ) ներկայացնում է Մուհամադ մարգարեի կյանքը, որպես իսլամական համայնքի ներկայացուցիչների համար օրինակ: Այն բաղկացած է մարգարեի գործողությունները (fi'l), խոսքերը (qawl) և իր զինակիցների արարքներին ու խոսքերին ցուցաբերած անխոս համաձայնությունը (taqrir) ներկայացնող պատմություններից՝ հադիսներից: St u Ислам, Энциклопедический словарь, Ред. Л. В. Негря, «Наука», Главная редакция восточной литературы, Москва, 1991, стр. 214.

առաջացող այն «նորությունները», «նորամուծությունները», որոնց նախադեպը չկար հաղիսներում: Մինչ որոշ մուսուլմաններ պնդում էին, որ իսլամում ցանկացած նորարարություն մերժելի է, մյուսները փորձում էին տարբերակել լավ (*hasana*) կամ գովելի (*mahmūda*) և վատ (*sayyi'a*) կամ պախարակելի (*madmūma*) նորամուծությունները: Ալ-Շաֆիին, օրինակ, պնդում էր, որ ցանկացած նորարարություն, որը հակասում է Ղուրանին, Սուննային, մուսուլման իրավագետների ընդհանուր դիրքորոշմանը (*ijma'*) կամ մարգարեի զինակիցներին և հետևորդներին վերագրվող ավանդույթին (*atār*) սխալ նորամուծություն է, հակառակ դեպքում այն ընդունելի է²: Սուննայի և նորարարության հակասության խնդիրն ու դրա հիմքերը հանգամանորեն քննարկվում են 12-րդ դարի հայտնի աստվածաբան ու քարոզիչ Իբն ալ-Ջաուզիի «Սատանայի խարդավանքները» (*Talbīs Iblīs*) ստեղծագործությունում:

Իրավաբան, աստվածաբան, քարոզիչ և պատմաբան Ջամալ ադ-Դին Աբու ալ-Ֆառաջ Աբդ ալ-Ռահման իբն Ալի Իբն ալ-Ջաուզի Աբդ ալ-Ռահման բն Ալի բն Մուհամմադ Աբու ալ-Ֆառաջը ծնվել է 1126թ.-ին Բաղդադում, ապահովված պղնձագործի ընտանիքում: Ստանալով լավ կրթություն և աշակերտելով ժամանակի հայտնի հեղինակություններին³ Իբն ալ-Ջաուզին ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում Բաղդադի կրոնաքաղաքական կյանքին:

² Robson J., *Bid'a // The Encyclopedia of Islam*, Vol. 1, Brill E. J., Leiden, 1986, p. 1199.

³ Իբն ալ-Ջաուզիի ուսուցիչներն են եղել ֆակիհ և քարոզիչ Իբն ալ Ջադունին (մահ. 1133), Աբու Բաքր ադ-Դինավարին (մահ.1137թ.), լեզվաբան Աբու Մանսուր ալ-Ջաուալիքին (մահ. 1144թ.), աղաբի մասնագետ Աբու ալ-Ֆադլ բն Նասիրը (մահ. 1150թ.), նրա առաջին ուսուցիչ, հաղիսները և Ղուրանը իրեն սովորեցրած ֆակիհ Աբու ալ-Հաքիմ ան-Նահրավանին (մահ. 1161թ.), կադի (դատավոր) Աբու Ալ կրտսերը (մահ. 1163թ.) և այլք: Իբն ալ-Ջաուզիի վրա մեծ ազդեցություն են ունեցել շաֆի-աշարի Աբու Նուայմ ալ-Իսֆահանիի (մահ. 1038թ.), պատմաբան-տրադիցիոնալիստ Ալ-Իսատիբ ալ-Բաղդադիի (մահ. 1071թ.) և հանբալի Իբն Ակիլի (1119թ.) աշխատությունները: St' u McAuliffe J. D., *Ibn al-Jawzi's Exegetical*

12-րդ դարի սկզբին Բաղդադը դարձել էր մադրասայի⁴ զարգացման և սուննիական դպրոցների բյուրեղացման հիմնական կենտրոնը: Իբն ալ-Ջաուզիին հովանավորում էր այդ դարաշրջանի ազդեցիկ պետական գործիչներից մեկը՝ հանքալի վազիր Իբն Խուբայրը (մահ. 1165թ.): 1161թ. Իբն ալ-Ջաուզին ստանձնեց Բաղդադում գործող մադրասաներից երկուսի ղեկավարությունը՝ ժառանգելով այդ գործն իր ուսուցիչ Ալ-Նահրաուանիից: Նույն ժամանակահատվածում՝ խալիֆ Ալ-Մուսթանջիդի օրոք (1160-1170թթ.), Իբն ալ-Ջաուզին սկսեց քարոզներ կարդալ պալատական մզկիթում: Ալ-Մուսթադի խալիֆի կառավարման շրջանում (1170-1180թթ.), որին Իբն ալ-Ջաուզին գովաբանական տրակտատ էր նվիրել, մայրաքաղաքում գերիշխող դարձավ հանքալիական մազհաբը⁵: Իբն ալ-Ջաուզին, ով արդեն հեղինակ էր բազմաթիվ աշխատությունների, դարձավ Բաղդադի հեղինակավոր և ազդեցիկ մարդկանցից մեկը և սկսեց ղեկավարել քաղաքում գործող հանքալիական հինգ մադրասաները:

Propaedeutic: Introduction and Translation // *Alif: Journal of Comparative Poetics*, No. 8, Interpretation and Hermeneutics, Cairo, 1988, p.102

⁴ Մադրասա (*madrasa*)՝ վայր, որտեղ սովորում են, կրթական հաստատություն: Մադրասաների գոյության առաջին վկայությունները թվագրվում են 10-րդ դարին, երբ նման հաստատություններ են ստեղծվում Խորասանում և Մավարանահրում: Մինչ այդ կրթություն ստանալն ու դասավանդումը կազմակերպվում և իրականացվում էր մզկիթներում, մասնավոր տներում, հյուրատներում կամ գրադարաններում: Մադրասաները հիմնադրվում և գործում էին վակֆերի՝ մասնավոր անձանց կողմից իրենց ունեցվածքի որոշ մասը բարեգործական նպատակներով տրամադրելու հաշվին: Մադրասաներում դասավանդվող հիմնական առարկան մուսուլմանական իրավունքն էր՝ ֆիկհը, որի հիման վրա խմբավորվում էին դպրոցները: *St u Ислам, Энциклопедический словарь*, Ред. Л. В. Негря, «Наука», Главная редакция восточной литературы, Москва, 1991, стр. 150.

⁵ Հանքալիական մազհաբը սուննի իսլամի 4 կրոնաիրավակական դպրոցներից մեկն է, որը հիմնադրել է աստվածաբան և իրավագետ Ահմադ իբն Հանբալը (780 – 855):

Բաղդադի պաշտոնական և հասարակական ոլորտներում Իբն ալ-Ջաուզիի բարձր հեղինակությունը արդյունք էր հանրալիական իրավական դպրոցներում նրա քարոզչության և դասավանդման: Նա ոչ միայն պաշտոնական քարոզներ էր անում պալատական մզկիթում և այդ դպրոցներում, այլ ելույթներ էր ունենում ավելի մեծ լսարանների համար: Իր քարոզներում Իբն ալ-Ջաուզին վճռականորեն պաշտպանում էր Սուննան ընդդեմ բոլոր նրանց, ում նա համարում էր աղանդավոր և քննադատում սուննի այն գիտնականներին, ովքեր, նրա կարծիքով, ամբողջովին հավատարիմ չէին հանրալի գիտնականների՝ իրական հավատի և սուննայի պահպանությանն ուղղվող անզիջում պահանջներին: Միննույն ժամանակ, նա կոչ էր անում վերականգնել խալիֆայությունը, որն ընդհանուր առմամբ ընկալվում էր որպես լեզիտիմ կառավարության և մուսուլմանների շրջանում միասնության խորհրդանիշ⁶:

Իբն ալ-Ջաուզիի մեծ ազդեցությունը խալիֆի վրա և վերջինիս աճող համակրանքը հանրալիների հանդեպ հարուցում էին կրոնաիրավական մյուս դպրոցների ներկայացուցիչների դժգոհությունը: Երկար տարիներ նա սերտորեն կապված էր Աբբասյանների հետ, ովքեր աջակցում և քաջալերում էին նրան և նրա քարոզչական գործունեությունը Բաղդադի հասարակական դաշտում: Սակայն 1194թ.-ին հանրալի վեզիր Իբն Յունուսի ձերբակալումից հետո և նրա փոխարեն շիա Իբն ալ-Քասսաբի նշանակումից հետո, Իբն ալ-Ջաուզին, խալիֆ Ալ-Նասիրի քաղաքականության քննադատը, ձերբակալվեց և ուղարկվեց Ուասիտ, որտեղ և խիստ հսկողությամբ պահվում էր բանտում: Նրան ազատ արձակեցին միայն հինգ տարի անց՝ շնորհիվ

⁶ Ephrat D., Ibn al-Jawzi // Medieval Islamic Civilization, An Encyclopedia, Volume 1, Editor Joseph W. Meri, p. 345.

խալիֆի մոր միջնորդության: Իբն ալ-Ջաուզին մահացավ Բաղդադ իր հանդիսավոր վերադարձից քիչ անց՝ 1200թ.-ին:

Լինելով Բաղդադի հանբալիների առաջնորդը 60-80ական թթ. Իբն ալ-Ջաուզին մեծ ազդեցություն է ունեցել այդ պահին զարգացող հանբալիական շարժման վրա: Նա հանդես էր գալիս ավանդական իսլամի դիրքերից՝ ի հակադրություն փիլիսոփաների և մութաքալիմների (աստվածաբան) ինտելեկտուալ կրոնական մտածողության: Նրա մեծաթիվ աշակերտները նշանակալի դեր ունեցան հանբալիների հետագա գործունեության, իսկ նրա աշխատությունները մանրակրկիտ ուսումնասիրության և բարձր գնահատանքի առարկա դարձան:

Իբն ալ-Ջաուզիի ստեղծագործությանն ու դրանում նորարարության խնդրին անդրադառնալիս անհրաժեշտ է ուրվագծել այն սոցիալ-քաղաքական և մշակութային միջավայրը, որում նա ապրում և ստեղծագործում էր: Տասներկուերորդ դարի սկզբին Բաղդադը մի քանի կողմից շրջափակված էր: Շարունակվում էր կործանարար մրցակցությունը Սելջուկյան դինաստիայի հետ: Իրաքի և Արևմտյան Պարսկաստանի ողջ տարածքը ենթարկվում էր իսմայիլի ասասիների գրոհներին: Մյուս խնդիրը իսաչակիրների հարձակումներն էին մերձավորարևելյան ուղությամբ: Չնայած Բաղդադը հարձակումների չէր ենթարկվում, այնուամենայնիվ այն ուներ գորքի և զենքի աջակցության կարիք⁷:

Մուսուլմանական բազմաշերտ ու բազմազգ ումմայում աստիճանաբար ձևակերպվում էին նոր հարցեր, որոնք առնչվում էին մեծ մեղք (քաբաիր) գործած մարդու կարգավիճակին, ազատ կամքին կամ բացարձակ կանխորոշվածությանը, Ալլահի բնույթին

⁷ McAuliffe J. D., Ibn al-Jawzi's Exegetical Propaedeutic: Introduction and Translation // Alif: Journal of Comparative Poetics, No. 8, Interpretation and Hermeneutics, Cairo, 1988, p.101.

և ասորիքուտներին, Ղուրանի արարված լինելուն կամ չլինելուն և այլ խնդիրների: Սրան զուգահեռ խալիֆայությունում ձևավորվում էին կրոնաիրավական ուղղություններ, որոնք տարբերվում և մրցակցում էին իսլամական իրավունքի՝ իրենց կողմից ընդունված աղբյուրներերով:

Չնայած քաղաքական ոչ կայուն վիճակին և գաղափարական բազմազանությանը այս ժամանակաշրջանը բնութագրվում է որպես սուննիական վերածննդի դարաշրջան⁸: Մուննիական վերածնունդը սկսվել է տասնմեկերորդ դարում, երբ Աբբասյան խալիֆայությունը Բաղդադում և թուրք-սելջուկ սուլթանները ակտիվորեն աջակցում էին սուննիականությանը և Մուհամմադ մարգարեի կողմից հաստատված պրակտիկաների և ստանդարտների պահպանմանը: 945թ. բուխների կողմից Բաղդադի գրավումից հետո Աբբասյան խալիֆները կորցրել էին աշխարհիկ իշխանությունը, իրական ուժը անցել էր բուի էմիրների ձեռքը, որոնք ազատորեն խրախուսում էին շիաներին և շիականությունը Իրաքում և Իրանում:

11-րդ դարի սկզբին Աբբասյան 25-րդ խալիֆ Ալ-Կադիրի (991-1031թթ.) գահակալության շրջանում Բաղդադի կրոնական քաղաքականությունը համեմատաբար անկախ էր և չէր ենթարկվում Շիրազի բուի էմիրին: Ստանալով Հանբալիական դպրոցի սուննի գիտնականների աջակցությունը խալիֆ Ալ-Կադիրը 1018թ.-ին հրապարակեց այսպես կոչված «Կադիրի հավատամքը», որը փորձ էր ստանդարտ սահմանել մուսուլմանական ուղղափառության համար: Սա հանբալիական

⁸ Ջորջ Մակդիսին իր «Մուննիական վերածնունդ» հոդվածում այս ժամանակաշրջանը (11-րդ դար) բնութագրում է որպես տոադիցիոնալ սուննիականության վերածնունդ, երբ տոադիցիոնալիզմի աջակիցները պայքարում էին ռացիոնալ աստվածաբանության աջակիցների դեմ: Մանրամասն տե՛ս *Макдиси Дж., Суннитское возрождение // Мусульманский мир 950-1150, Издательство Наука, Москва, 1981, сс. 174-188.*

ազդեցությամբ գրված նմանատիպ առաջին փաստաթուղթն էր, որը շարունակաբար ընթերցվում էր 11-րդ դարում: Դրանում Ալ-Կադիրը քննադատում էր շիաներին և մութազիլիներին և հայտարարում, որ ռացիոնալ կրոնական պնդումները, ինչպես օրինակ Ղուրանի արարված լինելու պնդումը անհավատություն (kufr) դրսևորումներ են և պետք է պատժվեն իշխանության կողմից: Խալիֆի բաց համագործակցությունը սուննի իսլամի հանրալիական դպրոցի պահպանողական գիտնականների հետ մեծացնում էր լարվածությունը Բաղդադում հավասարապես ուժեղ սուննիների և շիաների միջև՝ երբեմն հանգեցնելով զինված բախումների:

Սելջուկների հաստատումը Բաղդադում (1055թ.) ուժերի հավասարակշռությունը ամբողջովին փոխեց հոգուտ իսլամի և նրա սուննի դաշնակիցների: Դեռ 1053թ.-ին Սելջուկ սուլթան Տուղրիլ բեկի և նրա վեզիր Ալ-Քունդուրիի նախաձեռնությամբ դատապարտվեց աշարիական քալամի հիմնադիր Ալ-Աշարիի գործունեությունը և Խորասանից հեռացվեցին աշարի բոլոր գիտնականները: Այս հակաաշարիական գործունեությունը շարունակվեց հաջորդ տասնամյակում՝ Բաղդադ նրա հաղթական մուտքից հետո:

Սուննիական վերածննդի ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալեց Ալ-Քունդուրիին հաջորդած Նիզամ ալ-Մուլքը (1019-1092թթ.)⁹: Նա ձեռնամուխ եղավ իսլամի ֆայության

⁹ Տուղրիլ բեկը և նրա վեզիր Ամիդ ալ-Մուլք ալ-Քունդուրին հանաֆիներ էին և պաշտպանում էին հանաֆիական ուլեմներին, որոնց մի մասը մութազիլիներ էին, մինչդեռ Նիզամ ալ-Մուլքը շաֆի էր և պաշտպանում էր շաֆի ուլեմներին, որոնց շարքերում կային աշարիներ: Այդ ժամանակի սուլթան Ալփ Արսլանը հանաֆի էր, հանաֆի էր նաև նրա ֆիհանների նախարարը: Այս ժամանակաշրջանում արդեն հստակ գաղափարական պայքար էր ծավալվում շաֆիների և հանաֆիների միջև: St u Makdisi Дж., Суннитское возрождение // Мусульманский мир 950-1150, Издательство Наука, Москва, 1981, сс. 174-188.

խոշոր քաղաքներում Նիզամիյա կոչվող կրոնական դպրոցների հիմնադրմանը, որոնց միջոցով ինստիտուցիոնալիզացվեց սուննիական իրավագիտության և աստվածաբանության ուսուցումը: Այս ժամանակաշրջանում հստակ գաղափարական պայքար էր ծավալվում նաև կրոնաիրավական դպրոցների ներկայացուցիչների՝ մասնավորապես հանաֆիների, շաֆիների և հանբալիների միջև: Մինևույն ժամանակ արդեն 10-11-րդ դարերում արաբամուսուլմանական մշակույթի մեջ մեծացել էր սուֆիզմի դերը, որի տեսաբանները հաճախ փորձում էին ապացուցել, որ սուֆիզմը չի հակասում իսլամական ավանդական դոգմաներին և սրբազան տեքստերի իմաստին:

Կրոնաիրավական դպրոցների վեճերի և աստվածաբանական ուղղությունների գաղափարական տարբերությունների արդյունքում ձևավորված գիտելիքը առանձնակի վերլուծության և քննադատության է արժանացել Իբն ալ-Ջաուզիի կողմից: Նրա գրչին պատկանող ավելի քան 200 աշխատություններում ներկայացված են մուսուլմանական գրեթե բոլոր ավանդական գիտակարգերը¹⁰: «Նորարարության» դեմ իր պայքարը Իբն ալ-Ջաուզին ամբողջությամբ արտահայտել է «Մատանայի խարդավանքները» (Թալբիս-Իբլիս¹¹) աշխատության

¹⁰ Առավել նշանակալի ստեղծագործություն է 10հատորյա ալ-Մունթազամը՝ բացառիկ հարուստ աղբյուր խալիֆայության պատմության ուսումնասիրման համար, որում ներկայացված են առաջին չորս խալիֆների, իմամների, հայտնի ասկետների (գուհհադ) և վաղ իսլամի սուֆիների՝ Հասան ալ-Բասրիի, Մառուֆ ալ-Կարհի, Ռաբիյա ալ-Ադավիի, Ֆուդայլ բն Իյյադի գովաբանական կենսագրությունները, որոնց նա համարում էր ուղղահավատ մուսուլմանի օրինակ: St u Ephrat D., Ibn al-Jawzi // Medieval Islamic Civilization, An Encyclopaedia, Volume 1, Editor Joseph W. Meri, p. 345.

¹¹ Աշխատության մի մեծ հատվածը նվիրված է սուֆիների տեսության և պրակտիկայի ծայրահեղության քննադատությանը, ովքեր իրենց «վատ օրինակով» «վատ ազդեցություն» են ունենում մուսուլմանական համայնքի կյանքի վրա:

մեջ, որը դարձել է հանքալիական գրականության հիմնարար աշխատություններից մեկը: Այս գիրքը նվիրված է մուսուլմանական հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների քննադատությանը: Հեղինակի կարծիքով նրանք հեռացել են սուննայից և նրանց հատուկ է իսլամում վնասակար «նորարարությունների» ներմուծումը:

Գրքի «Դատապարտելով նորարարությունը և նորարարներին» (Fi dim al-bid'a wa al-mubtadi'in) գլխում Իբն ալ-Ջաուզին մեջբերելով հեղինակավոր նախնիների հաղորդած թվով 32 պատումներ փորձում է ցույց տալ նորարարության հակասությունը սուննային և դրա անթույլատրելիությունը: Հեղինակն, առաջին հերթին, մեջբերում է մարգարեի կնոջ՝ Աիշայի կողմից հիշատակվող հաղիսն այն մասին, որ Ալլահի մարգարեն ասել է. «Նա, ով նորարարություն է կատարում մեր այս հարցում (իսլամի), որը դրանից (իսլամից) չէ, կմերժվի»¹²:

Հստակեցնելու համար, թե որն է համարվում նորարարություն Իբն ալ-Ջաուզին ներկայացնում է հերթական հաղիսը՝ Աբդուլլահ իբն Ամրը հաղորդել է մարգարեից, որ նա ասել է. «Նա ով մերժում է իմ սուննան, ինձնից չէ»¹³:

Միայնաց հակասող Սուննայի և Բիդայի մասին խոսելիս հարց է առաջանում, թե ինչպես է Իբն ալ-Ջաուզին սահմանում այդ երկու հասկացությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանկացած նորարար պնդում էր, թե նա Ահլ ալ-Սուննայից է: Ըստ Իբն ալ-Ջաուզիի Սուննայի լեզվաբանական նշանակությունը «ճանապարհ», «ուղի» է: «Կասկած չկա, որ նրանք, ովքեր

¹² Al Bukhari, Sahih, Trans. Dr. M. Muhsin Khan, Darussalam, Riyadh, 1997, Vol. 3, Book 49, Hadith 861.

Այս հաղիսը գրեթե նույնությամբ հանդիպում է Մուսլիմի մոտ, տե՛ս Muslim, Sahih, Book 18, Hadith 4266.

¹³ Նույն տեղում, Book 1, Hadith 143.

մասնագիտանում են մարգարեի և նրա զինակիցների մասին պատմությունների հավաքագրման մեջ և հետևում են Ալլահի մարգարեի և նրա զինակիցների ավանդույթներին Մուննայի մարդիկ են (Ահլ ալ-Մուննա)»¹⁴: Սա այն պատճառով, որ նրանք հավատարիմ են այն դոկտրինին, որը զերծ էր նոր բացահայտված բաներից, որոնք Ալլահի մարգարեի և նրա զինակիցների մահից հետո միայն ներմուծվեցին:

Իբն ալ Ջաուզին սահմանում է բիդան որպես մի պրակտիկա, որն ի սկզբանե չի կիրառվել, սակայն ավելի ուշ ներմուծվել է վնասակար նորարարության արդյունքում: Բիդան մեծ մասամբ հակասում է Շարիաթին, քանի որ դրանով ենթադրվում է, որ այն (Շարիաթը) թերի է և կարիք ունի լրացման կամ որոշ բաների պակասեցման: Եթե կրոնափրավական մյուս դպրոցների ներկայացուցիչները առավել չափավոր մոտեցում ունեին շարիաթին չհակասող նորամուծությանը, այս հարցում հանբալիների, և Իբն ալ-Ջաուզիի դիրքորոշումը հստակ է՝ ցանկացած նորարարություն մերժելի է:

Եթե ներմուծվել է որևէ նորարարություն, որը չի հակասում Շարիաթին, միևնույն է, արդարամիտ հետևորդների մեծ մասը չէին ընդունում այն: Երբ Աբու Բաքրը և Օմարը պահանջում են Ջեյդ Իբն Սաբիթից հավաքել/կազմել Ղուրանը նա պատասխանում է. «Ինչպես կարող եք անել մի բան, որը Ալլահի մարգարեն երբևէ չի արել»¹⁵:

Իբն ալ-Ջաուզին մեջբերում է բազմաթիվ դրվագներ, որոնց միջոցով ցույց է տալիս, թե ինչպես էին արդարամիտ նախնիները (Սալաֆ) խուսափում նորարարությունից, անգամ եթե դրանք վնասակար չէին:

¹⁴ Ibn al-Jawzi, Talbīs Iblīs, Dar al-Qalam, Beirut, p. 17.

¹⁵ Նույն տեղում, էջ. 18:

Իսկ ովքե՞ր են կատարում այդ նորամուծությունները իսլամում: Իբն ալ-Ջաուզին իր «Սատանայի խարդավանքները» գրքում որպես նորարարներ կատարում է երեք հիշատակում կադարիների, երկուսը՝ մուրջիների և մեկ հիշատակում մութազիլիների մասին, ուղղությունների, որոնք առավել տարածված էին 12-րդ դարում:

Մա՛մար իբն Ռաշիդը հաղորդում է. «Տաուսը նստած էր, որդին էլ իր կողքին էր, երբ մի մութազիլի եկավ և սկսեց քննարկել մի հարց: Տաուսը իր մատները դրեց որդու ականջներին և ասաց նրան. «Որդի՛ս: Մատներդ դիր ականջներիդ, որպեսզի չլսես, թե ինչ է խոսում այս մարդը, քանի որ այս սիրտը թույլ է»: Նա շարունակեց ասել իր որդուն՝ փակի՛ր, փակի՛ր (ականջներդ), մինչ մութազիլին հեռացավ ¹⁶ : Այսպիսով, իրենց ուսմունքը բանականության փաստարկներով հիմնավորող մութազիլիները, Իբն ալ-Ջաուզիի կողմից որակվում էին որպես նորարարներ, որոնց լսելն անգամ չէր խրախուսվում:

Մեկ այլ օրինակ է հաղորդում Սալիհ ալ-Մուտին. «Մի մարդ այցելեց Իբն Սիրինին, և ես ներկա էի և սկսեց քննարկել մարդու ազատ կամքի (qadar) վերաբերյալ մի հարց, Իբն Սիրինը ասաց՝ կամ դու ես հեռանում, կամ մենք ենք հեռանում»: Մարդու կամքի և բացարձակ ազատության կողմնակից կադարիները ևս նորարարներ էին, որոնց հետ շփումը դիտարկվում էր որպես բիդա, ուստի մերժելի էր:

Մաիդ իբն Ամիր ալ-Քարիրին հաղորդում է. «Սուլեյման ալ-Թայմին հիվանդացավ, նա ուժգին լալիս էր: Մենք հարցրինք՝ ինչն է ստիպում նրան լաց լինել, արդյոք վախենում է մահից: Նա պատասխանեց. «Ոչ, բայց մի անգամ հանդիպել եմ մի կադարիի և բարևել եմ նրան: Վախենում եմ, թե տերը ինձնից պատասխան

¹⁶ Abu Nu‘aym, Hilyat al-Awliyah, Dar al-qutub al-‘ilmiya, Beirut, 1988, vol. 3, p. 32.

պահանջի դրա համար»։ Այս օրինակից պարզ երևում է, որ բացի նորարարների հետ շփումը սահմանափակելու անհրաժեշտության ներմուծվում է նաև դրա արդյունքում պատիժ կրելու վախը։

Մուրջիների հետ շփումների անթույլատրելիության մասին հաղորդում է Մուհիլ ալ-Ջաբին. «Մի մարդ մեզ հետ հաճախ այցելում էր Իբրահիմ ա-Նախաին։ Իբրահիմն իմացավ, որ այս մարդը միացել է մուրջիներին և ասաց նրան՝ երբ լքես այս հավաքը այլևս չվերադառնաս»¹⁷։

Վերը նշված պատումների վերլուծությունը թույլ է տալիս դուրս բերել գործողությունների մի շարք, ինչը չէր կարելի կատարել նորարարների հետ շփումներում։ Այսպիսով, նորարարների հետ չէր կարելի նստել, սիրել նրանց, ճանապարհ գնալ նրանց հետ, աղջկան, կամ քրոջը կնության տալ նրանց, լսել նրանց, անգամ հարգել և այլն։ Նորարարություն կատարող անձանց հետ անգամ պարզ զրուցելն ու խոսելն էր համարվում անթույլատրելի արարք¹⁸։ Հատկանշական է, որ լինելով հանրալի և սուֆիների խիստ քննադատ, հետևյալ արգելքների մասին պատմող դրվագների մեծ մասը (այս գլխում ներկայացված 32 պատումներից 13-ը) Իբն ալ Ջաուզին վերցրել է սուֆի-շաֆիի Աբու Նուայմ ալ-Իսֆահանիի (948-1038թթ.) Hilyat al-awliya' (Նախնիների գեղեցկությունը) տասհատորյա աշխատությունից, որը սուֆիզմի հիմնարար գործերից է համարվում։

¹⁷ Մուրջիները իսլամական աշխարհայացքային ուսմունքների այն ներկայացուցիչներն էին, որոնք հետաձգում էին մեղք գործած մարդու կարգավիճակի մասին դատողությունը մինչ Ահեդ Դատաստանի օրը։

¹⁸ Մալլամ իբն Աբի Մուրթին հաղորդում է. «Մի նորարար հարցրեց Այյուբ ալ-Սախտիյանիին. «Կարող եմ մի բան խոսել քեզ հետ»։ Նա պատասխանեց. «Ո՛չ, նույնիսկ կեսը չես կարող»»։ St u Abu Nu'aym, Hilyat al-Awliyah, Dar al-qutub al-'ilmiya, Beirut, 1988, vol. 3, p. 9.

Իբն ալ Ջաուզի մերժողական դիրքորոշումը իսլամում ցանկացած նորարարության հարցում բնականորեն պայմանավորված էր Աբբասյան խալիֆայության անկման և խալիֆայությունում մշտական մրցակցության մեջ տարբեր ուղղություններից մեկն ու մաքուրը պահպանելու անհրաժեշտությամբ:

Չնայած նորարարության հարցում կոշտ դիրքորոշմանը, Իբն ալ-Ջաուզին ընդունում էր, որ ավանդապահ նախնիները վնաս չէին տեսնում որոշ նորարարությունների կիրառման հարցում, եթե դրանք չէին հակասում շարիաթին: Օրինակ հաղորդվում է, որ մարդիկ Ռամադան ամսին սովոր էին առանձին աղոթել, սակայն երբեմն մի խումբ մարդիկ հավաքվում և աղոթում էին մեկի գլխավորությամբ: Ավելի ուշ, Օմարը հավաքեց բոլոր նրանց Ուբայյա իբն Քաաբի հետ աղոթելու և երբ դուրս եկավ և տեսավ նրանց, ասաց. «Այս նորամուծությունը մտցրի, քանի որ միասնական/հավաքական աղոթքը օրինական է»:

Միայն այս գլխում ներկայացվող օրինակները բավական չեն հասկանալու համար, թե ովքեր են նորարարները, ինչու է նրանց այս կամ այն գաղափարը կամ պնդումը դիտարկվում որպես վնասակար նորամուծություն և ինչու է պետք պայքարել նրանց դեմ: Այս հարցերին ի պատասխան Իբն ալ-Ջաուզին ներկայացնում է իսլամում նորամուծություն բերող ուղղությունների ամբողջական քարտեզը՝ մանրամասնելով նրանց գաղափարական առանձնահատկությունները:

Աբու Հուրեյրան հաղորդում է, որ Ալլահի առաքյալն ասել է. «Հրեաները բաժանվեցին յոթանասունմեկ խմբի, քրիստոնյաները բաժանվեցին յոթանասուններկու խմբի: Իմ ազգը կբաժանվի յոթանասուններեք խմբի»: «Դրանք բոլորը կընկնեն դժոխք, բացի մեկից»: «Որն է այդ մեկը, Ալլահի առաքյալ», հարցրին նրանք

(զինակիցները): Նա պատասխանեց՝ Ալ-Ջամաան (այստեղ՝ հավաքականությունը)¹⁹:

Մեջբերելով այս հադիսը Իբն ալ Ջաուզին փորձում է պատասխանել նաև այն հարցին, թե որոնք են իսլամում տարբեր գաղափարական ուղղություններն ամփոփող այն 72 խմբերը, որոնք չեն ընկնի դրախտ.: Նա դասակարգում է դրանք վեց հիմնական խմբերում (հառուտիներ, խարիջիներ, մուրջիներ, կադարիներ, ջարարիներ, ջահմիներ), որոնցից յուրաքանչյուրը հիմք է հանդիսացել ևս 12 ուղղության ձևավորման համար (Տե՛ս նկար 1):

Իբն ալ-Ջաուզիի կողմից ներկայացվող հառուտիականությունը խարիջիականության մյուս անվանումն է, որը տրվել է այս ուղղության հետևորդներին, ովքեր լքելով Ալի իբն Աբի Տալիբին հաստատվեցին Քուֆայի մերձակայքում գտնվող Հառուտա ավանում: Ի հակադրություն նրանց գործում էին մուրջիները, որոնք հետաձգում էին մեղք գործած մարդու կարգավիճակի վերաբերյալ դատողությունները մինչ Ահեղ Դատաստանի օրը:

Կադարիները ազատ կամքի գոյության աջակիցներն էին, իսկ ջարարիները՝ բացարձակ նախաինամության և կանխորոշվածության: Մեզ հայտնի շիական հոսանքները Իբն ալ Ջաուզիի ստեղծագործությունում ներկայացվում են ընդհանուր Ալ-Ռաֆիդա՝ մերժողներ հասկացության ներքո: Ջահմիները Ջահմ իբն Սաֆուանի հետևորդներն էին, ովքեր հերքում էին Ալլահի անունների կամ աստիքուտների գոյությունը և ընդունում Ղուրանի արարված լինելու դրույթը: Ներկայացվող բոլոր խմբերը համարվում էին սատանայի խարդավանքներին ենթարկված և իսլամում անհարկի նորամուծություն բերող ուղղություններ:

¹⁹ Ibn al-Jawzi, Talbis Iblis, Dar al-Qalam, Beirut, p. 17.

Այսպիսով, իսլամի տարածումը, մուսուլմանական համայնքի մեծացումը և նոր հարցերի առաջացումը բնորոշվում է երկու փոխկապակցված գործընթացներով՝ մի կողմից Ղուրանի և Սուննայի դրույթների ամրագրմամբ և անվերապահ պահպանությամբ, մյուս կողմից՝ նորարարությունների ներմուծմամբ: 12-րդ դարի հայտնի աստվածաբան և քարոզիչ Իբն ալ-Ջաուզին իր Թալբիս Իբլիս աշխատությունում ցույց է տալիս այդ նորամուծությունների անընդունելիությունը և հաղես գալիս խալիֆայական իշխանության վերականգնման, իսլամի մաքրության պահպանման և սուննիական վերածննդի անհրաժեշտության աջակցության դիրքերից:

НОВОВВЕДЕНИЯ И НОВАТОРЫ СОГЛАСНО ПРОИЗВЕДЕНИЮ ИБН АЛЬ-ДЖАУЗИ “ТАЛБИС ИБЛИС”

Резюме

Шушан Кюрегян
shoushan.kyureghyan@ysu.am

Ключевые слова: *Мусульманская община (умма), Сунна, инновация, Ибн аль-Джаузи, “Талбис Иблис”, Ханбалитская школа*

Распространение ислама, рост мусульманской общины и появление новых проблем характеризуются двумя взаимосвязанными процессами: с одной стороны, фиксацией и безоговорочной защитой положений Корана и Сунны, а с другой - внедрением вредных нововведений.

В статье рассматривается неприемлемость нововведений и новаторов согласно работе Ибн ал-Джаузи “Талбис Иблис”. В частности, представлено противоречие между положениями Сунны и нововведениями, и на этой основе разделяются идеологические особенности разных групп новаторов.

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING TO ‘IBN AL-JAWZĪ’S “TALBĪS IBLĪS”

Summary

Shoushan Kyureghyan

shoushan.kyureghyan@ysu.am

Keywords: *Muslim Community (Umma), Sunnah, Innovation, ‘Ibn al-Jawzī, “Talbīs Iblīs”, Hanbali School*

The continuous spread of Islam, the rapid expansion of the Islamic community and the emergence of new issues in Muslim world are characterized by two interrelated processes: on the one hand it is by setting the principles of the Quran and the Sunna and on the other by importing harmful innovations.

This article discusses the rejection of innovations and innovators according to ‘Ibn al-Jawzī’s “Talbīs Iblīs”. Particularly it introduces the issue of contradiction between the Sunna and the innovation, on the basis of which the ideological features of different groups of innovators are separated.

Նկար 1.

